ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2020թ. թիվ 360-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 08.04.2020թ. «2020թ. զորակոչի ընթացքում զինապարտների կցագրման, զորակոչի և վարժական հավաքի կանչելու ժամանակ բժշկական զննում իրականացնող տարածքային զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովների կազմը հաստատելու և առողջապահության նախարարի 2019թ. փետրվարի 28-ի թիվ 515-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1224-Ա հրամանը և 02.03.2020թ. թիվ 809-Ա հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը, հաշվի առնելով ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության ու «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ների միջև 16.01.2020թ. կնքված «2020թ. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Սպիտակի բժշկական կենտրոն», «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների և «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրեններին՝

Ձեր կազմակերպության՝ Լոռու մարզի զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողով գործուղված բուժաշխատողների (հավելված 1) վարձատրության փոխհատուցման նպատակով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել պայմանագիր:

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեններին՝

Ձեր կազմակերպության՝ Լոռու մարզի զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողով գործուղված բուժաշխատողների (հավելված 2) վարձատրության փոխհատուցման նպատակով «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել պայմանագիր:

3. «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի, «Սպիտակի բժշկական կենտրոն» և «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների տնօրեններին՝

1) Ձեր բժշկական կազմակերպության սպասարկման տարածքում հավաքագրված զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննության ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել պայմանագիր:

2) Յուրաքանչյուր ամսվա 15-ին և վերջին աշխատանքային օրը «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենին ներկայացնել ընթացիկ ամսվա ընթացքում հիվանդանոցային փորձաքննության ուղեգրված զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց անվանացանկը, պահանջվող տվյալները և տրամադրված ճանապարհածախսի ծավալները:

4. «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի, Գուգարքի տարածաշրջանի առողջության առաջնային պահպանման հաստատությունների («Գուգարքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ, «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ), «Տաշիրի բժշկական կենտրոն» և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների տնօրեններին՝

1) Ձեր բժշկական կազմակերպության սպասարկման տարածքում հավաքագրված զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննության ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել պայմանագիր:

2) Յուրաքանչյուր ամսվա 15-ին և վերջին աշխատանքային օրը «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենին ներկայացնել ընթացիկ ամսվա ընթացքում հիվանդանոցային փորձաքննության ուղեգրված զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց անվանացանկը, պահանջվող տվյալները և տրամադրված ճանապարհածախսի ծավալները:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունների կատարող Լ.Վարդանյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. ապրիլի 16
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. ապրիլի 16-ի
թիվ 360-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բժշկի մասնագիտությունը	**Բժիշկ-մասնագետի տվյալները /անուն, հայրանուն, ազգանունը/**	**Հիմնական կամ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատավայրը**
Թերապևտ	Աիդա Մնացականի Խաչիկյան	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Վիրաբույժ	Յուրի Գագիկի Քոսյան	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Քիթ-կոկորդ-ականջաբան	Արևիկ Վազգենի Ղազարյան	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Քիթ-կոկորդ-ականջաբան	Լուսինե Վաչագանի Մելքոնյան	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մաշկավեներաբան	Գրիգոր Վահագնի Մուրադյան	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Հոգեբույժ	Մարինե Էդիկի Հովսեփյան	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հոգեբույժ	Հասմիկ Սուրենի Առաքելյան	«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ
Սրտաբան	Շուշան Ժորայի Վարդանյան	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Նյարդաբան	Անահիտ Նապոլեոնի Օխանյան	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

04/16/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. ապրիլի 16-ի
թիվ 360-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բժշկի մասնագիտությունը	**Բժիշկ-մասնագետի տվյալները /անուն, հայրանուն, ազգանունը/**	**Հիմնական կամ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատավայրը**
Ակնաբույժ	Գայանե Էդվարդի Սարգսյան	«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Թերապևտ	Արմեն Գառնիկի Շիրվանյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Վիրաբույժ	Դավիթ Հրաչիկի Ազարյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Վնասվածքաբան	Ռաֆիկ Վլադիմիրի Աբոյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Վնասվածքաբան	Հրանտ Արշավիրի Քանքանյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ակնաբույժ	Մարիետա Արամայիսի Մալաքյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մաշկավեներաբան	Յուրի Ռաֆիկի Մկրտչյան	«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Սրտաբան	Վլադիմիր Սամադի Վերանյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Նյարդաբան	Ջեմմա ժորայի Ղուլիջանյան	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բուժքույր-քարտուղար	Կարինե Շուրայի Ջանվելյան	«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

04/16/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ